Ուրբաթ
10 հունվարի 2025թ.
№ 1 (631)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Մենք նոր սերնդին ենք թողնում սերը հայրենիքի նկատմամբ. ի՞նչը կարող է դա ավելի լավ արտահայտել, քան արվեստը:

Մարտիրոս Սարյան

Իմ սիրտը Կապանում է

Գեղանկարիչ Հրանտ Դանիելյանի ցուցահանդեսը Կապանում

Կապանա տան գեղանկարիչների փաղանգում Հրանտ Դանիելյանը մնայուն տեղ ունի: 1970-ականների կեսերից պարբերաբար կազմակերպվել են արվեստագետի գեղանկարների անհատական ցուցահանդեսներ, մասնակցել է նաև խմբակային ցուցահանդեսների: 2024թ. դեկտեմբերի 4-ին Հրանտը կդառնար 64 տարեկան: Բայց, ցավալիորեն, երեք տարի առաջ հրաժեշտ տվեց երկրային կյանքին:

Արվեստագետին հիշատակի տուրք էր Կապանի Ժամանակակից արվեստի թանգարանում՝ նրա ծննդյան տարեդարձի օրը բացված «Իմ սիրտը Կապանում է» խորագիրը կրող ցուցահանդեսը, որին մասնակցում էին Կապան, Քաջարան, Մեղրի, Սիսիան, Տեղ համայնքների ղեկավարներ Գևորգ Փարսյանը, Մանվել Փարամազյանը, Խաչատուր Անդրեասյանը, Հովսեփ Առաքելյանը, Դավիթ Ղուլունցը, ինչպես նաև «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության ղեկավար կազմը՝ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլիի գլխավորությամբ, հանրության տարբեր խավերի ներկայացուցիչներ, նրա արվեստի երկրպագուներ:

Բացման խոսքով հանդես եկավ գեղանկարիչ, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Դավիթ Դանիելյանը, ով մասնավորապես ասաց. *«Յուրաքանչյուր ստեղծագործող մարդ, ով գործունեություն է ծավալում մեր մարզում, արժանի է գնահատանքի: Այսօրվա ցուցահանդեսը կրում է «Իմ սիրտը Կապանում է» խորագիրը, որովհետև հայրս ամբողջ կյանքում ստեղծագործել, արարել և ժառանգություն է թողել Կապանին նվիրված բազմաթիվ ստեղծագործություններ: Սա ևս Կապանի ու Սյունիքի ճանաչելիությունը բարձրացնելու մի ճանապարհ է: Շնորհակալ եմ բոլորիդ»:*

Գեղանկարչի արվեստի մասին գնահատանքի խոսք ասաց Կապանի արվեստի պետական քոլեջի տնօրեն Աշոտ Խաչատրյանը: Գեղանկարչի մյուս որդին՝ Արամ Դանիելյանը, երախտագիտություն հայտնեց համայնքային իշխանություններին՝ ի դեմս համայնքապետ Գևորգ Փարսյանի, ցուցահանդեսի կազմակերպմանը նպաստելու համար:

Այնուհետև ցուցահանդեսի այցելուները ծանոթացան Հրանտ Դանիելյանի կտավներին, որ նա արարել է կյանքի վերջին երկուերեք տարվա ընթացքում: Դրանցում հայրենի եզերքի հանդեպ սեր կար, ջերմ վերաբերմունք և քնքշություն:

Առաջին անգամ այս կտավները ցուցադրվել են 2022-ին՝ Երևանում՝ Հայաստանի նկարիչների միությունում, հաջորդ ցուցադրությունները կլինեն Գյումրիում, Ռուսաստանի Դաշնությունում, Արաբական Միացյալ Էմիրություններում, Եվրոպայում:

2025 թվականի գարնանը նախատեսվում է բացել Հրանտ Դանիելյանի տուն-թանգարան՝ Սմբատ Մելիք-Ստեփանյան 10 հասցեում, որտեղ նա ստեղծագործել է մոտ 30 տարի, և կապանցիների համար արդեն իսկ սիրված և հոգեհարազատ վայր էր դարձել...

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ծնվել է 1960թ. դեկտեմբերի 4-ին Կապանում՝ նկարչի ընտանիքում:
1975 – 78 թթ. գերազանցությամբ սովորել է գեղարվեստի դպրոցում և ավարտել այն:
1987թ. ավարտել է Մոսկվայի ժողովրդական արվեստի համալսարանի հաստոցային գեղանկարչության և գրաֆիկայի բաժինը:
1981 - 2000թթ. աշխատել է Կապանի տրիկոտաժի արտադրական միավորումում՝ նկարիչ-ձևավորող (դիզայներ):
1982թ. մեկնել է Կիև և հաճախել տեղի պետական գեղարվեստի ինստիտուտ՝ որպես ազատ ունկնդիր:
2005 թվականից Հայաստանի նկարիչների միության անդամ էր: 2013 թվականից՝ Կապանի քաղաքապետարանի գեղարվեստական խորհրդի անդամ:
Մահացել է 2021թ. նոյեմբերի 3-ին:

Ցուցահանդեսներ, որոնց մասնակցել է Հրանտ Դանիելյանը

1974 – 1975 թթ., անհատական ցուցահանդես Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցում:

- **1976 – 1977 թթ.**, մասնակցել է Կապանի գեղարվեստի դպրոցում կազմակերպված ցուցահանդեսին:
- **1981 թ.**, անհատական ցուցահանդես Կապանի գեղարվեստի դպրոցում:
- **1982 թ.**, անհատական ցուցահանդես Կապանի երկրագիտական թանգարանում:
- **1985 թ.**, մասնակցել է ուսանողական ցուցահանդեսներին Մոսկվայում և Լեհաստանում:
- **1985 թ.**, մասնակցել է հանրապետական գիտամեթոդական կենտրոնում կազմակերպված ցուցահանդեսին:
- **1986 թ.**, անհատական ցուցահանդես Կապանի տրիկոտաժի արտադրական միավորումում:
- **1987 թ.**, անհատական ցուցահանդես հանրապետական լուսաշխի տանը:
- **1987 թ.**, Կապանի մշակույթի կենտրոնում կազմակերպված ցուցահանդես:
- **1988 թ.**, ժամանակակից արվեստի թանգարանի Կապանի մասնաճյուղում կազմակերպված ցուցահանդես:
- **1996 թ.**, մասնակցել է Կապանի պատկերասրահում կազմակերպած ցուցահանդեսին:
- **1996 թ.**, մասնակցել է Կապանի մշակույթի կենտրոնում կազմակերպված «Սյունիք 96» թատերական փառատոնին նվիրված ցուցահանդեսին:
- **1998 թ.**, մասնակցել է Երևանում կազմակերպված Սյունիքի մարզի նկարիչների ցուցահանդեսին, հայ արվեստի պրոպագանդայի և ինֆորմացիայի վիճակագրական կենտրոնում:
- **1999 թ.**, ՀՀ ժամանակակից արվեստի թանգարանի Կապանի մասնաճյուղում կազմակերպված Կապանի նկարիչների ցուցահանդես:
- **2000 թ.**, Կապանի մշակույթի կենտրոնում կազմակերպված Սյունիքի մարզի նկարիչների ցուցահանդես:
- **2003 թ.**, Գլենդելի քաղաքապետարանի պատվին կազմակերպված ցուցահանդես՝ Կապանի մշակույթի կենտրոնում:
- **2001 - 2003 - 2005 թվականներ**, մասնակցել է Հայաստանի նկարիչների միությունում կազմակերպված ցուցահանդեսին:
- **2006 թ.**, ժամանակակից արվեստի թանգարանի Կապանի մասնաճյուղում՝ ԵԱՀԿ գրասենյակի կողմից կազմակերպված ցուցահանդես:
- **2008 թ.**, մասնակցել է Կապան քաղաքի հոբելյանին նվիրված ցուցահանդեսին՝ Կապանի մշակույթի կենտրոնում:
- **2012 – 2013 թթ.**, մասնակցել է ժամանակակից արվեստի թանգարանի Կապանի մասնաճյուղում կազմակերպված ցուցահանդեսին:
- **2016 թ.**, անհատական ցուցահանդես ՀՀ նկարիչների միության ցուցասրահում՝ «Գարնանամուտ Կապանում» խորագրով:
- **2017 թ.**, ՀՀ նկարիչների միությունում՝ նկարիչների միության 85-ամյակի կապակցությամբ կազմակերպված ցուցահանդես:
- **2019 թ.**, գարնանային հանրապետական ցուցահանդես Հայաստանի նկարիչների միությունում:
- **2021 թ.**, խմբակային ցուցահանդես Կապանի ժամանակակից արվեստի թանգարանում՝ նվիրված քաղաքի օրվան:
- **2022 թ.**, անհատական ցուցահանդես Հայաստանի նկարիչների միությունում (Իմ սիրտը Կապանում է)՝ նվիրված նկարչի հիշատակի օրվան:
- **2024 թ.**, անհատական ցուցահանդես Կապանի ժամանակից արվեստի թանգարանում (Իմ սիրտը Կապանում է)՝ նվիրված նկարչի ծննդյան օրվան: //

Լուսանկարը՝ Նվեր Զեյլայի

Հրանտ Դանիելյանի ցուցահանդեսը 4 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թ. Կապանում

Լուսանկարը՝ Նվեր Զեյլայի

Լուսանկարը՝ Նվեր Զեյլայի

ԴԱՎԻԹ ԴԱՆԻԵԼՅԱՆ.
«Հորս ստեղծագործությունները ոչ միայն գեղանկարչական գրավչություն և արժեք ունեն, այլև մշակութաբանական»

ՀՀ Ազգային ժողովի սյունեցի պատգամավոր Դավիթ Դանիելյանը մեր լսարանին առավել հայտնի անձնավորություններից է: Նրա հետ քանիցս զրույց ենք վարել հասարակական–քաղաքական թեմաների կամ մարզին մտահոգող հարցերի շուրջ: Այսօր, սակայն, մեր զրույցը գեղանկարչության մասին է, ավելի ճիշտ՝ իր հոր՝ Հրանտ Դանիելյանի արվեստի մասին, որին առնչվեցինք 2024 թ. դեկտեմբերի 4-ին՝ Կապանի ժամանակակից արվեստի թանգարանում կազմակերպված ցուցահանդեսում՝ «Իմ սիրտը Կապանում է» խորագրով:

Լուսանկարը՝ Նվեր Ջեյանի

– Պարոն Դանիելյան, իրականում այնքան էլ դյուրին չէ որդու հետ հոր ստեղծագործական ժառանգության մասին զրուցելը, բայց փորձենք դա անել...

Նախ՝ դեկտեմբերի 4-ի ցուցահանդեսի մասին. ինչպե՞ս ծնվեց գաղափարը, ինչպե՞ս կյանքի կոչվեց:

– Հայրս իր 60-ամյակի կապակցությամբ պատրաստվում էր ունենալ «Իմ սիրտը Կապանում է» խորագրով ցուցահանդես: Իրեն հատուկ կազմակերպվածությամբ և շատ մանրակրկիտ կերպով պատրաստվում էր այդ իրադարձությանը: Սակայն 2020 թվականի պատերազմի հետևանքով երկրում ձևավորված դրությունը ստիպեց հետաձգել այդ ցուցահանդեսը: Շատ լավ հիշում եմ մեր զրույցը, երբ հայրս ասաց՝ այդքան երիտասարդ զոհեր ունենալով՝ տեղին չէ իր 60-րդ տարեդարձը ցուցահանդեսով նշանավորելը: Ավա՜ղ, նա չգիտեր, որ հաջորդ տարի իր կյանքը կընդհատվի: Հենց այդ պատճառով որոշեցինք երազանքն իրականացնել, ցավոք, առանց հայրիկիս ներկայության: Կազմակերպեցինք ցուցահանդես Երևանի նկարիչների միությունում, իսկ հաջորդ տարի՝ ցուցահանդեսը բացվեց նաև Կապանում:

– Ցուցասրահում որքա՞ն նկար էր ներկայացված, կարծում ենք ցուցադրվածը Հրանտ Դանիելյանի ստեղծագործական ժառանգության միայն մի մասն էր, թե՞...

Եվ եթե ընտրանի է եղել, ապա ի՞նչ սկզբունքով եք ընտրություն կատարել:

– Այո, իր ստեղծագործությունների միայն մի մասն էր ներկայացված: Հիմնականում վերջին տարիների կապանյան բնապատկերներն են, գյուղական տեսարանները և խուստուփյան էտյուդներ:

– Մենք բազմաթիվ ցուցահանդեսների մասնակցելու առիթ ենք ունեցել և՛ մարզում, և՛ մայրաքաղաքում, բայց դեկտեմբերի 4-ի ցուցահանդեսի բազմամարդությունը տպավորություն թողեց:

Ձեր գնահատականը՝ դա խելամիտ կազմակերպված նախապատրաստական աշխատանքի արդյո՞ւնք էր, թե՞ Հրանտ Դանիելյանի արվեստի հանդեպ հանրային մեծ հետաքրքրության արտահայտություն:

– Վստահ եմ՝ Հրանտ Դանիելյանի վաստակը և ազնվությունը բոլորին են հայտնի: Նա Կապանին նվիրված, բարի և պարկեշտ մարդ էր: Կապանցիները նրան սիրով և հարգանքով են հիշում, հենց այդ պատճառով էլ ցուցահանդեսն այդքան բազմամարդ էր: Մարդիկ եկել էին իրենց ներկայությամբ պատվելու քաղաքի մի մասը դարձած նկարչի հիշատակը, ինչպես և վերստին ծանոթանալու նրա արվեստին:

– Մինչև դեկտեմբերի 4-ի ցուցահանդեսը՝ կապանցի արվեստասեր հանրությունը որքանո՞վ էր ծանոթ Հրանտ Դանիելյանի արվեստին, նախկինում (թեև ոչ այդ ծավալով) ներկայացվե՞լ էր իր հայրենակիցներին:

– Հրանտ Դանիելյանը բազմաթիվ ցուցահանդեսներ է ունեցել Կապանում: Ակտիվ մասնակցել է քաղաքի մշակութային կյանքին, ավելին՝ շատերը կարող են փաստել, որ Կապանում արվեստի կայացման, գեղանկարչության զարգացման և սերունդներին կրթելու գործում առաջամարտիկներից է եղել:

– Ցուցահանդեսում, որքան հասկացանք, ներկայացված գեղանկարների թեմատիկան Կապանն էր՝ իր բնաշխարհով, ուշարժան վայրերով: Արդյո՞ք ճիշտ է մեր ընկալումը:

– Այո, ճիշտ է:

– Կարո՞ղ ենք արձանագրել, որ կապանյան թեման միակ ասելիքը չէ Հրանտ Դանիելյանի արվեստում:

– Նրա ստեղծագործական կյանքը լի է ոչ միայն կապանյան բնաշխարհով, այլև ազգային մշակույթի տարրերով: Հայրս ունի բազմաթիվ աշխատանքներ հայկական ավանդական կենցաղից, պատկերել է գյուղական կենցաղի տարրեր, ունի շատ հայտնի խուստուփյան ծաղիկների նատյուրմորտներ: Նա կարողացել է աշխատել տարբեր ոճերով, բայց ունի շատ ինքնատիպ ու հստակ ակադեմիական ձեռագիր:

– Փորձեք ընդհանուր գծերով բնութագրել Հրանտ Դանիելյանի արվեստը: Որո՞նք են նրա ստեղծագործություններին բնորոշ հիմնական գծերը:

– Ընդհանուր կերպով կարելի է ասել՝ ռեալիզմ, որին բնորոշ է յուրահատուկ սիմվոլիզմ: Նրա ստեղծագործությունները ոչ միայն գեղանկարչական գրավչություն և արժեք ունեն, այլև մշակութաբանական: Դրանք վկայություն են, մշակութային կոդեր, հատուկ հիշողություններ, որոնք հասկանալի և հարազատ են կապանցուն:

– Դուք, որպես գեղանկարիչ, արդեն իսկ որոշակի ճանաչում ունեք մեզանում...

Որքանո՞վ է Հրանտ Դանիելյանը և՛ որպես ծնող, և՛ որպես գեղանկարիչ ազդեցություն ունեցել Ձեր մասնագիտական կողմնորոշման վրա:

– Ես ծնվել եմ Արցախյան առաջին պատերազմի օրերին, երբ Կապանը ծանր ու դժվարին իրավիճակում էր, մարդիկ ապրում էին ապաստարաններում: Մեր ապաստարանը հորս արվեստանոցն էր: Ծնված օրվանից այնտեղ եմ եղել, հետո նկարել եմ նրա հետ, նա է եղել իմ ուսուցիչը, վարպետը և ավագ ընկերը: Հենց նրա հետ էլ պատրաստվել եմ և ընդունվել համալսարան: Նա է ինձ ոգևորել՝ շարունակելու կրթությունս մագիստրատուրայում: Հայրս ուներ ակադեմիական կրթություն և շատ էր ողջունում կրթվելու մեր ցանկությունը: Իհարկե, նա ունի հսկայական ազդեցություն իմ մասնագիտական կողմնորոշման գործում:

– Մեր տրամադրության տակ է կապանյան ցուցահանդեսի մասնակիցներին բաժանված բուկլետը, որից տեղեկանում ենք՝ Հրանտ Դանիելյանը մասնակցել է 25 ցուցահանդեսի: Անշուշտ, դրանցից յուրաքանչյուրը կարևոր նշանակություն է ունեցել. այդպես ենք կարծում: Եվ, այդուհանդերձ, ո՞ր ցուցահանդեսն էր ինքը կարևորում առավել շատ. ենթադրում ենք՝ այդ մասին ինքը ժամանակին արտահայտված կլինի:

– Երևանում կայացած անհատական ցուցահանդեսը թերևս իր համար շատ կարևոր էր: Երբ դեռ ինտերնետը՝ որպես ստեղծագործողին բացահայտելու հարթակ, հայտնի չէր, հայրս դեռ չէր պատկերացնում՝ որքան տարածված են իր աշխատանքները: Մարդիկ իր կտավները միմյանց էին նվիրում, շատ աշխատանքներ գտել են հանգրվաններ աշխարհի տարբեր անկյուններում, անհատական հավաքածուներում: Այդ ցուցահանդեսի ընթացքում հայրս ծանոթացավ իր արվեստի սիրահարներին, վերագնահատեց իրեն և շատ դրական արձագանքների արժանացավ: Յուրաքանչյուր ստեղծագործողի համար լսարանի արձագանքը շատ կարևոր է:

– Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ Հրանտ Դանիելյանի աշխատանքների մի մասը տեղ է գտել տարբեր մարդկանց մասնավոր հավաքածուներում: Դուք ունե՞ք ամբողջական տեղեկատվություն նկարչի ստեղծագործությունների և նրանց գտնվելու մասին:

– Ցավոք, ոչ: Ինձ և եղբայրներիս հաճախ են ուղարկում նրա կտավների լուսանկարներն աշխարհի տարբեր անկյուններից: Այդ նկարների հետ ուղարկում են նաև հորս մասին հուշեր, որոնք մեզ համար շատ թանկ են: Ես ուրախ եմ, որ հորս աշխատանքները սիրված են ու գնահատված, և յուրաքանչյուր ոք, ով իր տանն ունի Հրանտ Դանիելյանի կտավները, շատ հարազատ է մեզ:

– Հետագա ծրագրերի մասին՝ Հրանտ Դանիելյանի գեղանկարչական ժառանգությունը պահպանելու և հանրայնացնելու ուղղությամբ: Որքան տեղյակ ենք, տուն–թանգարան հիմնելու մտադրություն ունեք:

– Հորս հիշատակը վառ ենք պահելու բովանդակային ու մնայուն նախագծերով: Մշտապես տարբեր ձևաչափերով միջոցառումներ ենք կազմակերպելու, ցուցահանդեսներ են կայանալու ԱՄԷ-ում, ԵՄ որոշ երկրներում, ՌԴ-ում: Հրանտ Դանիելյանի արվեստանոցը, որը շատ մարդկանց համար բարի հիշողությունների ու հետաքրքիր զրույցների վայր է, դառնալու է տուն-թանգարան: Հնարավորինս պահպանելու ենք արվեստանոցի սկզբնական մթնոլորտը՝ փորձելով քիչ փոփոխություններ անել: Միևնույն ժամանակ, նպատակ ունենք այդ թանգարանը դարձնել Կապանի ուշարժան տեղերից մեկը, որը կունենա մշակութային գործառույթ:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ՄԱՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ

Անդրադարձ՝ տարիների հեռվից

Լուսակերպ արև



ՎԱՉԳԵՆ Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ վաստակավոր դերասան

Երբ իջնում է երեկոն, սպառված ջերմությունը հոգնությունից թափվում է կտուրներին, մարդկային մտքերը մի նոր կերպարանք առած թափառում են խավարապատ երկնակամարում: Կերպարանքներն էլ կիանդիպեն իրար ու դանդաղ կսահեն դեպի արարչության խորանները: Նա էլ կվառի արվեստանոցի լույսը, երկար կնայի նատյուրմորտ դարձած տրեխներին, կօրհնի ինքն իրեն՝ արմատից մինչ կենաց ծառը: Ինքնամոռաց պահ, բազում հարցականներով լեցուն: Ո՞վ էր ինքը, էս ո՞ւր է շտապում, հորից մինչև ինքը, հետո՝ որդին, մի ճանապա՞րհ է, նախատեսվա՞ծ, լոկ այսպե՞ս, անուն ունի՞ այդ ամենը, կամ ինքն անուն ունի՞: Ոլոր-մոլոր ճամփաները բյուրավոր եկել-խառնվել գլխի մեջ, մի կողմում՝ լույս, մյուսում՝ ստվեր, կռիվ է ներսում: Պայծառատես աչքերով փնտրում էր ինքն իրեն, մեկ՝ կորցնում, մեկ՝ գտնում, երերում էր, ընկնում թավալգլոր, բարձրանալով նայում էր անորոշ հորիզոնին՝ հարցականների մի ողջ տարափ շպրտելով առարկայական աշխարհին: Վրձին ու կտավ, դարձյալ՝ կտավ ու վրձին, նույն աշխարհը տարբեր, մեկ՝ գունաթափ, մեկ՝ գունառատ, այլակերպ:

Ինքը կարմրել, աչքերը պարզ արևոտ առավոտ, մազերն այլակի պես գանգուր, քիթն անդունդ նայող ժայռակալ, դունչն առաջ մղված վահանակալ, այտերը մանկական խանդավառով լեցուն, ճակատը լայն, ձեռքին բալետի մենապարուհի դարձած վրձին: Հաջողված դիմանկար՝ Հրանտ Դանիելյան...

* * *

Հրանտի աշխարհին իր նախասկիզբն ուներ, հոր՝ նկարիչ Արամայիս Դանիելյանի օրհնությամբ լեցուն, ու շարունակությունը նկարիչ որդու վաղվա խոր մտահոգություններով: Նույն աստվածատուր ճանապարհը, եռապատկվել էր արվեստագետ մարդու հոգսը, փոքր-ինչ ներսից կռացել, շալակած բեռից հոգնել: Սակայն մի պարզ, գյուղական միամտությամբ իմաստալից ժպիտ կար դեմքին, ներշնչող, կյանքառատ...

Մինչդեռ խուստուփյան վայրի քրիզանթեմն անմահացել էր կտավում, հաճելի հոտը երևակայորեն գամել դիտորդին:

Ապրելու տեսա՞կ է սա, թե՞ էություն, որ հենց այս տեսակին էր հարիր: Տառապանքն էլ գույն ունի, մենությունը՝ լույս, աշխարհընկալումը՝ չափ, շատերի համար անհասանելի... Պարզապես մարդկային հոգու արժեքները չափող գործիք չկա, ու Հրանտն էլ երևի նրա համար է, որ գնահատես մեղմությունն ու չկորցնես լույսը, որ լիցք է դառնալու և վարակի շրջապատն անհասկանալի մի ոգևորությամբ:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ», N 4, 10 ՓԵՏՐՎԱՐԻ 2003 Թ.

Նա կարողացել է իր արվեստով շատ բան փոխել մարդկանց մեջ, նրանց մտքերում ու գործողություններում

Գեղանկարիչ Հրանտ Դանիելյանի «Իմ սիրտը Կապանում է» թեմայով կապանյան ցուցահանդեսում (04.12.2024 թ.) զրույց ունեցանք նրա որդու՝ Արամ Դանիելյանի հետ, ով նույնպես գեղանկարիչ է:

– Հարգելի Արամ, առաջին անգամ եք ներկայանում «Սյունյաց երկրի» լսարանին, ուստի և կուզենայինք, գոնե համառոտ, տեղեկանալ Ձեր անցած ճանապարհին, նաև ներկա գործունեությանը:

– Ծնվել և մեծացել եմ Կապան քաղաքում, ավարտել եմ Կապանի արվեստի դպրոցը, այնուհետև՝ Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը, բարձրագույն կրթությունս ստացել եմ Գեղարվեստի պետական ակադեմիայում: Ուսանողական տարիներից բնակվում եմ Երևան քաղաքում՝ պահպանելով կապը Կապանի հետ: Այդ ընթացքում աշխատել եմ դիզայնի, հեռուստատեսության և կինոյի ոլորտներում, այնուհետև՝ 2014 թ.-ին, հիմնադրել եմ «Դանիելյան» արվեստի կենտրոնը, որն ամենախոշորն է Երևան քաղաքում, գործում է չորս մասնաճյուղով, որտեղ ուսանում են բազմաթիվ սաներ:

– Երբ առիթ է լինում խոսել Ձեր հոր՝ Հրանտ Դանիելյան գեղանկարչի մասին, ապա նշվում է նրա՝ նկարչի ընտանիքում ծնված լինելու մասին, ասել է՝ նրա տաղանդը սերում է նախնիներից: Ձեր նախնիներից ո՞վ էր զբաղվում նկարչությամբ և ի՞նչ ժառանգություն է թողել:

– Նկարչությամբ զբաղվել են պապս և հայրս, այժմ նրանց գործը շարունակում ենք ես և եղբայրս: Հայրս տեսել և սովորել է իր հորից՝ Արամայիս Դանիելյանից, ես և եղբայրս՝ Դավիթը, արդեն սկսեցինք ոգեշնչվել հայրիկի աշխատանքներից ու նրա արվեստանոցից:

– Կարո՞ղ ենք ասել՝ և՛ Դուք, և՛ եղբայրդ՝ Դավիթ Դանիելյանը, գեղանկարիչ եք դարձել նաև նախնիներից եկող շնորհի ու նախասիրության ազդեցությամբ: Ի՞նչ խորհուրդներ էր տալիս Հրանտ Դանիելյանը գեղանկարիչ զավակներին՝ մասնագիտական (և ոչ միայն) առումով:

– Միանշանակ՝ մեր հայրիկի ներդրումն իմ և Դավիթի գեղանկարչական ուղու մեջ մեծ է և, իհարկե, եթե մեր հայրը չլիներ գեղանկարիչ, դժվար թե մենք ևս զբաղվեինք այդ գործով: Մեր հայրը՝ գեղանկարիչ Հրանտ Դանիելյանը, մեծ ավանդ է ունեցել գեղանկարչությունը մեր մեջ զարգացնելու գործում, քանի որ մեր ծնված օրվանից տեսել ենք հայրիկին այդ աշխատանքի մեջ: Նա խորհուրդներ էր տալիս և՛ գեղանկարչության հետ կապված, և՛ կյանքի հետ կապված, ու այդ ամենն ընդհանրանալով՝ դառնում էր այն ոգեշնչման աղբյուրը, որը ես և եղբայրս ստանում էինք: Նրա հետ շփումներն ու մշակութային դաստիարակությունը հետագայում մեծ հետք ունեցան մեր գեղանկարչական կարիերայում:

– Փորձե՞լ եք ինքներդ Ձեզ համար ճշտել–պարզաբանել՝ ինչպե՞ս ծնվեց, ձևավորվեց կամ ստեղծագործական ի՞նչ փուլեր անցավ նկարիչ Հրանտ Դանիելյանը:

– Հայրիկի հետ մեր հարաբերությունները ծնող-երեխա հարաբերություն լինելուց բացի, նաև շատ ընկերական են եղել, ու քանի որ շատ-շատ մոտ ենք եղել միմյանց հետ, ես մանրամասն գիտեմ, թե հայրիկը և՛ երիտասարդ տարիքում, և՛ հետագայում՝ արդեն պատերազմական ժամանակաշրջանում, ինչպիսի դժվար, դաժան և ծանր ճանապարհներով է անցել: Մեծ դժվարությունների միջով անցնելով՝ երեք որդի կրթեց, երեք որդի ճանապարհեց հայկական բանակ, երեքին էլ տվեց բարձրագույն մասնագիտական կրթություն: Հայրիկի անցած ճանապարհը շատ արգասաբեր, բայց և դժվար է եղել:

– Փորձեք հիշել Հրանտ Դանիելյանին՝ նկարակալի առջև նստած և նոր աշխատանք սկսելիս...

– Երբ հայրիկի անունը տալիս են, ես նրան միանգամից հիշում եմ նկարակալի առջև նստած, որովհետև մանուկ հասակից միշտ նստել եմ նրա թիկունքում՝ նրա հետնամասում գտնվող նստարանին և ուշադիր հետևել աշխատանքի ընթացքին, հետևել նրա վրձնահարվածներին: Մի քիչ մեծանալուց հետո արդեն սկսել եմ նաև նրան խորհուրդներ տալ, և հետաքրքիրն այն էր, որ հայրիկը միշտ հաշվի էր առնում իմ խորհուրդները և ժամանակ առ ժամանակ նաև կիրառում, միասին ուրախանում էինք, երբ իմ տված խորհրդով ինչ-որ բան փոխում էր իր տվյալ աշխատանքի մեջ: Ու երկուսս էլ ոգևորվում էինք, երբ այդ փոփոխությունից աշխատանքն ավելի հետաքրքիր էր ստացվում:

– Դուք անմիջական շփումներ եք ունեցել և, բնականաբար, առավել լիարժեք կարող եք բնութագրել Հրանտ Դանիելյանի արվեստը: Խնդրեմ:

– Հրանտ Դանիելյանի արվեստը մեկ բառով կարելի է նկարագրել՝ մաքրություն, որովհետև այն ժամանակը, որ միասին ենք անցկացրել արվեստանոցում՝ տեսնելով նրա մոտեցումն աշխատանքին, ես միայն և միայն տեսել եմ մաքրություն ու ազնվություն իր աշխատանքի հանդեպ: Ազնիվ արվեստագետ էր և ոչինչ հենց այնպես չէր անում, ու այդ ազնվությունն ու մաքրությունն է, որ այսօր հարյուրավոր հանդիսատեսներ հայրիկի նկարները բնութագրում են որպես մաքրություն, դրական էներգետիկայի աղբյուր:

– Հրանտ Դանիելյանն ունի՞ ստեղծագործությունների ամբողջական կատալոգ կամ՝ քանակային առումով ի՞նչ ծավալ ունի նրա գեղանկարչական ժառանգությունը, թեև հասկանում ենք՝ քանակով չէ, որ բնութագրվում են արվեստի գործերը:

– Հայրիկն ունի շատ աշխատանքներ՝ մի քանի հարյուրի հասնող: Այցելուն տեսել է դրա կեսը, կա նաև տասնյակ փոքր չափերի ծաղիկների շարք, որոնք դեռ չեն ցուցադրվել, դրանք կցուցադրվեն նկարչի 65-ամյակի կապակցությամբ կայանալիք ցուցահանդեսին, որը կլինի և՛ Երևանում, և՛ Կապանում: Հայրիկի թողած ժառանգությունն ահռելի է, այդ իսկ պատճառով աշխատում ենք ամեն ինչ անել, որպեսզի պատշաճ կերպով ցուցադրվի հանդիսատեսին: Ամբողջական կատալոգ, որտեղ ներառված են նրա բոլոր աշխատանքները, դեռ չկա, բայց ժամանակի ընթացքում կհասնենք նրան, որպեսզի մեկ ամբողջական կատալոգ ունենանք, որտեղ ներառված կլինեն նրա բոլոր աշխատանքները:

– Երբևէ տեսե՞լ եք հայրիկին՝ իր նկարների հետ մեն-մենակ զրուցելիս, մեն–մենակ խորհրդածելիս:

– Եթե Ձեզ բախտ վիճակվեր ներկա լինելու նրա ամեն մի նկարի ստեղծման ընթացքին, Դուք կտեսնեիք՝ ինչպես էր լռակյաց զրուցում սեփական ստեղծագործությունների հետ՝ իր հայացքով, իր դեմքի արտահայտությամբ: Զրուցում էր մինչև վերջին վրձնահարվածը՝ հոգով, աչքերով, միմիկայով, և դա տպավորվել է իմ մեջ: Միշտ հիշում եմ իր հայացքը ստեղծագործելու պահերին:

– Ազդեցություններ... Կերպարվեստում նույնպես, ինչպես արվեստի մյուս ոլորտներում, արվեստագետը կրում է այս կամ այն նշանավորի ազդեցությունը, որին երբեմն նույնիսկ ընդօրինակում է: Ո՞ւմ ազդեցությունն էր, ըստ Ձեզ, շատ թե քիչ կրում Հրանտ Դանիելյանը կամ ո՞վ էր նրա համար իդեալ, ընդօրինակման կերպար արվեստում:

– Հայրիկը սիրում էր ռուսական և եվրոպական դասական գեղանկարչությունը, սիրում էր նաև հայ նկարիչների՝ Մարտիրոս Սարյան, Մինաս Ավետիսյան,

↘

Լուսանկարը՝ Նելլի Ձեյնալի

– Նրա արվեստին բանավոր կերպով շատ արվեստագետներ են անդրադարձել, բայց գրավոր՝ ոչ, երևի թե մտածելով՝ դեռ կհանդիպեն, կտեսնեն: Ասել է՝ միշտ ներկա կլինի Հրանտ Դանիելյանը, և իրենք հնարավորություն կունենան հենց նրան հայտնել իրենց կարծիքը:

Հակոբ Հակոբյան, Հակոբ Կոջոյան և, կարելի է ասել, ոչ թե մեկ նկարչից էր ոգեշնչվում, այլ ժամանակ առ ժամանակ կենտրոնանում էր մի նկարչի ստեղծագործական կյանքի վրա ու այդ ժամանակահատվածում ուսումնասիրում միայն այդ նկարչին, շատ կարդում նրա մասին: Հայրիկը շատ-շատ տեղեկացված էր, շատ էր կարդում նկարիչների մասին, փայլուն գիտեր Հայաստանի արվեստի պատմությունը և համաշխարհային արվեստի պատմությունը՝ թվականներով, մանրակրկիտ դետալներով և իրադարձություններով:

– Կարելի՞ է ասել, որ նրա արվեստն ուսումնասիրված է, թեկուզ և ոչ ամբողջական: Արվեստագետներից ովքե՞ր են անդրադարձել նրա ստեղծագործություններին, իսկ միգուցե դա կարևոր չէ՞:

– Նրա արվեստին բանավոր կերպով շատ արվեստագետներ են անդրադարձել, բայց գրավոր՝ ոչ, երևի թե մտածելով՝ դեռ կհանդիպեն, կտեսնեն: Ասել է՝ միշտ ներկա կլինի Հրանտ Դանիելյանը, և իրենք հնարավորություն կունենան հենց նրան հայտնել իրենց կարծիքը: Այժմ գրեթե պատրաստ է նրա թանգարանի վեբ կայքը, որտեղ զետեղված կլինեն տարբեր նկարիչների կարծիքներ նրա աշխատանքների վերաբերյալ: Ներառված կլինեն նաև այն կատալոգում, որի մասին քիչ առաջ խոսեցինք:

– Հրանտ Դանիելյանի ոճը, որդեգրած ուղղությունը, աշխարհի հանդեպ իր վերաբերմունքը... Իսկ միգուցե ինքն իր սեփական ճանապա՞րհն ուներ:

– Հրանտ Դանիելյանի ոճը շատ դժվար է բնութագրել, քանի որ տարբեր ժամանակաշրջաններում տարբեր ոճերի մեջ է ստեղծագործել, չնայած ունեցել է իր ընդհանուր գիծն ու թելն այդ ամենի մեջ: Բայց հիմնականում սիրում էր նկարել բնանկարներ, նատյուրմորտներ, ծաղիկներ, դիմանկարներ, աշխատում էր թե՛ էքսպրեսիոնիզմի, թե՛ իմպրեսիոնիզմի ոճերի մեջ, ունեցել է նաև մի քանի աշխատանքներ պուանտելիզմի ոճի մեջ: Եվ հիմնականում կարելի է ասել՝ նա ստեղծեց սեփական ոճը, ուղղությունը, որը շատ խիստ տարբերվեց, և մեր կազմակերպած վերջին ցուցահանդեսի ժամանակ ակնհայտ երևաց՝ բնանկարների այն գիծը, որը ստեղծել էր, բայց, ցավոք, չկարողացավ շարունակել: Այդ աշխատանքների հետ կապված մեծ պլաններ ունեինք, դրանք պետք է գերազանցեին ոչ թե 50-ը, այլ 100-ը, որպեսզի ունենայինք մասշտաբային ցուցահանդես, մենք արդեն իսկ նրա հետ քննարկում էինք այդ ցուցահանդեսի մանրամասները, բայց, ցավոք սրտի, չարաբաստիկ համավարակը թույլ չտվեց ավարտին հասցնել... Նա շատ ակտիվ, ամենօրյա ռեժիմով էր աշխատում ու հենց բնությունից էր օգտվում և շատ հետաքրքիր ու նոր ձևով սկսեց ներկայանալ:

– Վաղուց է՝ գեղանկարչությունը նաև կոմերցիոն արվեստ է համարվում կամ ընկալվում (և ոչ միայն մեզանում): Արդյո՞ք ինքն այդ գործելակերպին տեղ էր տալիս: Չնայած մենք այն կարծիքն ունենք, որ նկարը նաև պիտի վաճառվի, տարածվի...

– Կարծում եմ՝ ստեղծագործությունը պետք է արվի ազնիվ, մաքուր, առանց որևիցե կոմերցիոն նշանակության, բայց կոմերցիան, միանշանակ, մեծ դեր է խաղում նկարչի առաջխաղացման և սոցիալապես ապահովված լինելու գործում: Ինչպես շատերը, հայրիկը նույնպես վաճառում էր աշխատանքներ, որի շնորհիվ էլ ապրում էինք, զարգանում, կրթվում: Նաև դրանով է ոգևորվում արվեստագետը, որովհետև երբ դու ստեղծում ես մի հետաքրքիր գործ՝ պետք է ոչ թե պահես քո արվեստանոցում, այլ պետք է «թույլ տաս» նրան՝ դուրս գալու քո տիրույթից ու գտնելու իր հանգրվանը: Կարծում եմ՝ արվեստագետը պետք է կարողանա «բաց թողնել» իր ստեղծագործությունը, որ նկարը գտնի իր ընտանիքը, իր մշտական տեղը և ապրի այդ ընտանիքում, պատկանի այդ ընտանիքին՝ սերնդեսերունդ: Հայրիկի մահից հետո ոչ մի վաճառք տեղի չի ունեցել, նրա աշխատանքներն այս պահին չեն վաճառվում, միայն մասնակցում են ցուցադրությունների, հետագայում անգամ եթե վաճառվի, ապա դրանք լինելու են եզակի դեպքեր ու միայն միջազգային աճուրդների շնորհիվ, որոնց հասույթն ուղղվելու է Հրանտ Դանիելյանի թանգարանի զարգացմանը, երիտասարդ ստեղծագործողներին օգնելուն, նրանց համար լավ պայմաններ ստեղծելուն, այդ միջոցները ծառայելու են միայն բարեգործական նպատակների: Համենայնդեպս այս պահին նման ծրագիր ու նպատակ չկա, նրա աշխատանքները միայն ցուցադրվում են:

Լուսանկարը՝ Դավիթ Ջելյանի

Հրանտ Դանիելյանի որդի Հայկ Դանիելյանը

Լուսանկարը՝ Նվեր Ջելյանի

– Հրանտ Դանիելյանի լավագույն կտավներից մի քանիսը փորձեք առանձնացնել:

– Դժվար է առանձնացնել Հրանտ Դանիելյանի լավագույն նկարները, հնարավոր չէ նրա մեկ նկարը մյուսից գերադասել: Կամ այդ հարցի հասցեատերը ես չեմ, որովհետև ես ամեն մի վրձնահարվածն ու գիծն եմ սիրում հայրիկի և ընդունում ամեն մի նկարը, ինչպես մեր ընտանիքի անդամ, և չեմ կարող մի նկարը մյուսից առանձնացնել: Ու կարծում եմ՝ այդ հարցը ճիշտ կլիներ ուղղել հանդիսատեսին, ով այլ ռակուրսից և այլ հայացքով է նայում այս ամենին, որպեսզի կարողանաք ավելի օբյեկտիվ պատասխան լսել: Իմ պատասխանը լինելու է սուբյեկտիվ և հուզական, որովհետև բոլոր աշխատանքներն էլ ինձ հարազատ են:

– Ցուցահանդեսը դիտելիս, կարծեք, նրա համար նախապատվելի գունային միջավայրն էլ հասկանալի դարձավ՝ կանաչը և կապո՞ւյտը, թե՞...

– Այո, Դուք ճիշտ եք, ցուցադրված նկարներում գերիշխում էին Ձեր նշած գույները: Այնուամենայնիվ, այնտեղ կային այլ կոլորիտներ: Ուզում եմ նշել նաև , որ Ձեր նշած գույները հայրիկի ամենասիրելի գույներն էին, բնության այդ գույները նրա նախընտրելի և ներկապնակի հիմնական գույներն էին:

– Ստեղծագործական պրոցեսը չի կարող տեղի ունենալ՝ առանց ոգեշնչման աղբյուրի: Ցուցահանդեսը թույլ է տալիս եզրակացնել՝ նրա ոգեշնչման աղբյուրը բնօրրան Կապանն էր: Արդյո՞ք ճիշտ է մեր ընկալումը:

– Միանշանակ՝ նրա առաջնային ոգեշնչման աղբյուրը հենց Կապանն էր, որովհետև քնում և արթնանում էր Կապանով, նույնիսկ երբ գտնվում էր այլ քաղաքում կամ երկրում, ժամանման օրվանից արդեն ուզում էր վերադառնալ Կապան: Կապանին սիրահարված արվեստագետ էր, Կապանի ամեն մի քարն ու ծառը, ամեն մի հայրենակիցն ու բնակիչը նրա ոգեշնչման աղբյուրն էին: Սկսած հարևաններից՝ վերջացրած ամենատարբեր մարդկանցով, միշտ ոգևորված ու ոգեշնչված էր մտնում տուն կամ արվեստանոց, և իր ստացած դրական էներգիան փոխանցում կտավներին:

– Հրանտ Դանիելյանը վաղ հեռացավ կյանքից: Ասում են՝ դեռ ասելիք ուներ, կիսատ ծրագրեր ուներ, ասում են՝ գեղանկարչության մեջ նրա սահմանն անսահմանությունն էր: Բայց այդ մասին, կարծում ենք, Դուք ավելի քաջատեղյակ կլինեք:

– Հրանտ Դանիելյանն անժամանակ և անակնկալ կերպով հեռացավ՝ թողնելով մեծ ժառանգություն, բայց և շատ կիսատ գործեր: Վերջին շրջանում զգացվում էր, թե ինչպես է ուզում ամեն մի ժամն ու րոպեն օգտագործել ստեղծագործությունների վրա. բազում պլաններ ու երազանքներ ուներ, որոնք պետք է ի կատար ածեր: Այնուամենայնիվ՝ ընտանիքով բախվելով ճակատագրի այդ հեգնանքին ու հարվածին, սկսում ենք ուղղել մեր մեջքը և առաջ տանել Հրանտ Դանիելյանի կիսատ թողած աշխատանքները: Ու ոչ թե ավարտին ենք հասցնելու, այլ շարունակելու ենք այնքան, մինչև մեր երեխաներն էստաֆետը կվերցնեն իրենց ձեռքը: Իհարկե, նրա ստեղծագործական կյանքը կանգ է առել, բայց դեռ ցույց տալու բան ունենք: Չենք սահմանափակվելու Հայաստանով, պլանավորում ենք ցուցահանդեսներ աշխարհի տարբեր երկրներում: Ու արվեստասեր մարդիկ՝ աշխարհի տարբեր անկյուններում, տարբեր հեռուստածրագրերից կտեղեկանան Հրանտ Դանիելյանի ստեղծագործությունների մասին և, միանշանակ, մեր համերկրացիները մեծ հպարտությամբ կլցվեն՝ տեսնելով այդ ամենը:

– Ասված խոսք կա՝ նկարիչը ցավ պատկերելու, հոգիներ բուժելու առաքելություն ունի: Իսկ հիվանդը հասարակությունն է, ժամանակի որոշ բարքերն են...

Ի՞նչ եք կարծում, կարողացա՞վ Հրանտ Դանիելյանն ազգային մեր ցավերին իր բաժին հոգևոր բալասանը դնել:

– Համոզված եմ՝ այդ հարցում մեծ դեր ունեցավ Հրանտ Դանիելյանը՝ որպես մարդ, որպես ստեղծագործող, բայց այդ հարցին ավելի ճիշտ կպատասխանի արվեստասեր հասարակությունը: Կարծում եմ՝ նման ներդրում, միանշանակ, ունեցել է, և իր արվեստով կարողացել է շատ բան փոխել մարդկանց մեջ, նրանց մտքերում ու գործողություններում: Եվ, անշուշտ, ստացվել է...

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Լուսանկարը՝ Դավիթ Ջելյանի

Հրանտ Դանիելյանի ոճը շատ դժվար է բնութագրել, քանի որ տարբեր ժամանակաշրջաններում տարբեր ոճերի մեջ է ստեղծագործել, չնայած ունեցել է իր ընդհանուր գիծն ու թելն այդ ամենի մեջ:

Հայացք Հրանտ Դանիելյանի արվեստին

ՍՈՒՐԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ
Հայաստանի նկարիչների միության նախագահ

Նկարիչ, Հայաստանի նկարիչների միության անդամ Հրանտ Դանիելյանն ակտիվ ստեղծագործական գործունեություն է վարել դեռևս 70-ական թվականներից: Մասնակցել է միջազգային, հանրապետական, համամիութենական խմբակային ցուցահանդեսների, ունեցել անհատական ցուցահանդեսներ Հայաստանում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում, Ռուսաստանի Դաշնությունում և այլն:

Հրանտ Դանիելյանի աշխատանքները գտնվում են աշխարհի տարբեր մասնավոր հավաքածուներում, ինչպես նաև Հայաստանի տարբեր թանգարաններում:

2013 թ. հանդիսացել է Կապանի քաղաքապետարանի գեղարվեստական խորհրդի անդամ և ակտիվ մշակութային գործունեություն վարել ծննդավայր Կապանում: Եվ իզուր չէ, որ ստեղծագործական կյանքի մեծ մասը նվիրել է հարազատ քաղաքին՝ պատկերելով Կապանի այն հետաքրքիր վայրերը, որոնք մարդն առաջին հայացքից չի կարող տեսնել և զգալ: Կարողացել է իր ստեղծագործություններով մարդկանց գերել քաղաք Կապանով, կրթել երիտասարդ սերնդին, կապանցիներին «ստիպել» ավելի մեծ սիրով վերաբերվել իրենց բնօրրանին:



ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ
ՀՀ նկարիչների միության անդամ

1970-ական թվականներից շփումներ ունեինք Հրանտ Դանիելյանի հետ:

Նրա մասին կարող եմ միայն դրականն ասել... Եվ ինչ հաջողությունների հասել էր՝ միայն իր աշխատասիրության շնորհիվ: Շատ-շատ էր աշխատում, չկար այնպիսի օր, որ չգնար անտառ՝ էտյուդ, բնանկար անելու:

Քանակով շատ նկարներ ունի. ճիշտ է, կարևորը քանակը չէ, բայց այդ քանակը բերեց որակի: Նկարները նայելիս երեխայական պարզություն եմ տեսնում, անմիջականություն, անկեղծություն: Հիմնականում բնանկարներ էր նկարում, գերակշռում են կապանյան թեմաները: Ուրիշ նկարիչներից չի վերցրել, տպավորվել կամ ինչ-որ տեղից օգտվել: Իրենն է... Փոքր էտյուդները՝ մի շնչով արված, նույնպես տպավորիչ են: Իսկ ինքնադիմանկարը, որ ցուցահանդեսում տեսա, շատ հավանեցի:

Վերջին շրջանում արված ծաղիկների նկարներ ուներ, դրանք հավանեցի, նատյուրմորտները նույնպես տպավորիչ են: Յուրաքանչյուր նկարիչ նախընտրելի, սիրելի գույնն ունի: Նրա մոտ բնության գույներն են շատ արտահայտված, կանաչի երանգներն ավելի էր գերադասում: Աշնանային եղանակին՝ ոսկեգույնը:

Ո՞րն էր Հրանտ Դանիելյանի ասելիքը, ի՞նչ էր ուզում ասել:

Սիրահարված էր իր ծննդավայրին: Նկարներում արտահայտում էր սերը բնության հանդեպ: Սիրում էր Վաչագան գետը նկարել, Խուստուփն էր սիրում նկարել: Մի խոսքով՝ ներկայացնում էր ծննդավայրը՝ իր աչքերով, իր զգացածով:

ԼԻԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ
«Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի նախկին տնօրեն

Արդիկ կան, ովքեր ծնվում են, ապրում, գործում և արարում սերունդների համար՝ սերմանելով միայն լավն ու բարին, վեհն ու գեղեցիկը, ազնիվը: Այդ մարդկանցից է կապանցի նկարիչ Հրանտ Դանիելյանը: Համեստ, բարյացակամ, իր գործի նվիրյալ մարդ, ով մինչև վերջ հարազատ մնաց իր կոչմանը՝ գեղանկարչությանը:

Գեղեցիկի տենչով համակված, սիրով լեցուն դեպի հայրենի բնաշխարհը՝ Խուստուփ լեռը, Վաչագան գետը, Կապան քաղաքը, հարազատ փողոցը, տունը, ծառը, ճյուղը, մարդիկ, մեծ ոգևորությամբ, գեղեցիկ երանգներով և լույսով ստեղծում էր իր կտավները:

Չափից ավելի համեստությունը, բարությունը, միշտ ժպտերես լինելը՝ կարծես բոլորին իրավունք էր տալիս կտրել նրան իր սիրած գործից և հյուրընկալվել արվեստանոցում: Նրա մոտ խմբերով այցելում էին քոլեջի ուսանողները և այնտեղից վերադառնում պայծառ ու լավատես, ոգևորված՝ էլ ավելի վստահ իրենց ընտրած մասնագիտության մեջ:

Դա ոչ միայն արվեստանոց էր, այլև փոքրիկ մի թանգարան՝ հին ու նոր իրերի հարուստ հավաքածուով: Ամեն մի իր ուներ իր պատմությունը, որը սիրով ներկայացնում էր: Ավելի շատ վրձնով էր խոսում:

Շատ առիթներ էի ունենում այցելելու նրան՝ ներկայացնելու մեր քոլեջի հյուրերին՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսորներ, ՀՀ ժողովրդական արտիստ Անժելա Աթաբեկյանին, Սերգեյ Քեչեկին, Իվան Վարդանյանին (Երևանում՝ նրանց տանը, մինչև հիմա կախված է վեհանիստ Խուստուփի լեռան նկարը):

Ամեն անգամ մեծ հաճույքով ու դրվատանքով եմ հիշում նրա ջերմ ընդունելությունը, զրույցները: Հրանտ Դանիելյանը սիրում էր ներկայացնել, պատմել իր ուսանող, ստեղծագործող տղաների մասին:

Հպարտությամբ եմ նշում՝ Ռոբերտ Կամոյանը, Հրանտ Դանիելյանը մեծ ավանդ ունեցան՝ երաժշտական ուսումնարանն արվեստի քոլեջի վերածելու և գործող մասնագիտություններն ընդլայնելու, գեղանկարչության դասարան հիմնելու գործում:

Անդրադարձ՝ տարիների հեռվից

«Նկարիչ լինելն արմատներիցս է»

ՀՐԱՉՅԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Փոքրիկ մի արվեստանոց, պատից կախված նկարներ, աչքի ընկնող հնաոճ իրեր և չհանգած՝ ծխախոտի ծուխ: Կապանցի նկարիչ Հրանտ Դանիելյանի աշխարհ-արվեստանոցն է:

Այգաբացին, երբ դեռ քաղաքը քնած է անգուշակ երազներով, կբացի իր արվեստանոցի դուռը, կմտնի իր (միայն իրեն պատկանող) աշխարհը, կմրմնջա՝ «Եղիցի լույս» ու վրձինն անշտապ կմոտեցնի՝ սկզբից ներկապնակին, իսկ հետո՝ նկարակալի վրա՝ ամրացված և միայն ժամանակավոր քուն մտած (թե՞ անքուն մնացած) նատյուրմորտին:

Եվ այդ պահից էլ կսկսվի հավերժական կռիվ-ճակատամարտը գեղանկարիչ Հրանտ Դանիելյանի և կտավ ու գույնի միջև: Կռիվ, որտեղ արյան փոխարեն ու մահի տեղակ գունեղ պատկերների և կենսահյութ մտքերի ծնունդ է լինում:

Իր ծննդավայրի սարն ու ձորը, գետն ու ծաղիկը դարսդարսվելով՝ գույն ու պատկեր դարձած կտավի կվերածվեն: Նրանք կդառնան ստեղծագործ մտքի թարգմանները:

Պտղատու ծառի բերքի համն ու հոտն ուղղակիորեն կախված է առողջ սերմից ու մեկ էլ՝ պարարտ հողից: Այդպես է և մարդու արած գործի ծանր ու թեթև արժևորելիս, գնահատելիս: Այս դեպքում ասածս բնականոն է գեղանկարիչ Հրանտ Դանիելյանի համար:

Ծնվել է 1960 թվականին Կապանում: Ինչ խոսք, հայրական գյուղի դաշտ ու անտառ, պապիկ-մամիկի ջերմ գուրգուրանք, թոռրածուին լավաշ ու տրեխ, խուրջին ու չորթան եկան-լցվեցին մանուկ Հրանտի հոգին, ձևավորեցին նրա միտքն ու աշխարհընկալումը: Պատանու նախասիրությունների ձևավորման մեջ մեծ դեր ուներ, անշուշտ, Արամայիս հայրը՝ համեստ մի մտավորական, ով ի ծնե մտերիմ էր ներկ ու վրձնի հետ: Որդին տեսավ ու սովորեց, սովորեց ու հմտացավ, գլուխ բարձրացրեց հայրական գենը, առվակն առու դարձավ, հետո էլ Վաչագանը՝ Ողջի գետ, և Հրանտն էլ որոշեց (այլ կերպ չի լինում) նկարիչ դառնալ:

Սկզբում ավարտեց Կապանի գեղարվեստի դպրոցը: Իր առաջին իսկ աշխատանքներով աչքի ընկավ ինքնատիպությամբ, մտածողության թարմությամբ, գույների նուրբ զգացողությամբ և, անպայման, արմատներին հարազատ մնալու անսանձ պահանջ-ձգտումով: Տեղական մամուլը շտապեց արձագանքել, փոքր ու մեծ ցուցահանդեսներում դիպլոմ ու գովասանագիր ստացավ, դրանք խնամքով հավաքեց ու պահում է առայսօր:

Նույն խնամքով էլ, մասունքի պես պահում է հորն ուղղված Գուրգեն Մահարու նամակը: Սնապարծությո՞ւն է սա: Ոչ: Ընդհակառակը: Համեստորեն լռում է, որ «Ծաղկած փշալարերի» հեղինակի մտերիմներից էր հայրը:

Նկարիչը երբեք ինքնագոհ և ինքնահավան չի եղել: Պարզ ու զուլալ է, ինչպես իր հայրենի Լեռնահայաստանը: Այդպես պարզ ու մաքուր է նրա գեղանկարչությունը: Ոչ մի սարքովի ու կեղծ միտք կամ գույն, գաղափար կամ աղճատված աշխարհընկալում տեղ չունեն նրա նկարչության մեջ: Ամեն ինչ հողեղեն է, մանկության պես ջերմ ու անկեղծ: Ահա թե ինչու «Հիշողություն» ընդհանուր խորագրով մի ամբողջ շարք նատյուրմորտներ ունի վրձնած:

Խնոցի ու կարպետ, լավաշ ու ժանգյալով հաց՝ գունապատկերի վերածված, գալիս ու լցվում են հոգիդ, մանկության հուշաղբույր են բերում ամենքիս, բարի լուր ու բարություն (որն այնքան պակաս է այսօր) ավետում բոլորին: Նայում ես «Զանգեզուրյան ծաղիկներ» նկարին ու մի պահ թվում է, թե Խուստուփատակի լանջերում ես: Արևի բույր կա, իր սար ու ձորի համուհոտը կա այս ծաղկաբույլում: Իսկ հետո՞: Հետո էլ՝ տխրության ու թախծի մեկ օր (երանի մեկ օր լիներ), նկարիչը պիտի վրձներ «Մեր հին փողոցը» կտավը: Հրանտ Դանիելյան նկարիչը հավերժ կարոտում է այդ հին փողոցը, այդ փողոցի ծառ ու թուփը, այդ փողոցում ծնված-մեծացած մարդկանց՝ վերջապես: Կարոտում է, որովհետև այդ հին (թե նորերն են հին ու անպետք) փողոցում չարք ու չարություն չկար, այդ նույն փողոցում պայթող մահաբեր արկ ու ավիառումբ չկար, ապաստարան դարձած իր արվեստանոցը չկար, այդ նույն արվեստանոցում 1992-ին նկարչի գրկում սարսափից ծվարած իր նորամանուկ Դավիթը չկար: Հայի ճակատագիր է, հեռու չես փախչի:

Իրենից ու հորից հեռու չփախավ և գեղանկարչի ավագ որդին՝ 14-ամյա Արամայիսը: Երբ հարցնես՝ «Ինչո՞ւ հորդ ոչ հեշտ, ոչ փողաբեր (ախր հիմա ստիպում են ազգովի վաճառական ու չարչի լինել, հացի խնդիր լուծող պաշտոնի է պետք ձգտել, ջանս) մասնագիտությունն ընտրեցիր, հայ պարմանի». հոր նման համեստորեն կլռի: Բայց աչքերը լեզու կառնեն նույն Հրանտ հոր նման, կասեն՝ արմատներիցս է:

Ու այդպես նկարում են հայր ու որդի Դանիելյանները, նկարում անդուլ-անդադար, մոռացած առօրյա հոգս ու դարդ, հավատով ու նվիրվածությամբ: Դժգոհող ու փնթփնթան չէ գեղանկարիչը, բայց ցավով է նշում, որ մայրաքաղաքում կազմակերպված մեծամասշտաբ ցուցահանդեսներին մասնակցելու պակաս կա, կտավ ու ներկի պակաս կա ու՝ բարության:

Ամեն կապանցի իր Խուստուփ լեռն ունի: Իրենն է այդ ժայռ-լեռը, միայն իրենը, ու չի տա ոչ ոքի: Իր ու միմիայն իր...

Խուստուփն ունի և գեղանկարիչ Հրանտ Դանիելյան: Ամեն ցայգալույսի կբարևի, իր հետ կտանի աշխարհ- արվեստանոցը և երբեք չի բաժանվի նրանից: Արմատներից է դա... Այդտեղ է սկիզբն ու վերջը (այս դեպքում վերջը նոր սկիզբ է) ամեն ճշմարիտ հայի:

«ՍՅՈՒՆԻՔ», N 13,
1 ՀՈՒԼԻՍԻ 1999 Թ.

Ամեն կապանցի իր Խուստուփ լեռն ունի: Իրենն է այդ ժայռ-լեռը, միայն իրենը, ու չի տա ոչ ոքի: Իր ու միմիայն իր...

Հայացք Հրանտ Դանիելյանի արվեստին

ՌՈՒԲԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ (ՈՒԲԱԿ)
Հայաստանի նկարիչների միության անդամ

Հաճախ եմ այցելել Հրանտ Դանիելյանի արվեստանոց... Եվ ամեն անգամ ականատես էի լինում նոր գործերի, որոնք գերում էին ինձ՝ նախևառաջ անկեղծությամբ: Չէր ընկնում «իզմ»–երի հետևից, նկարում էր այնպես, ինչպես զգում էր: Կարծում եմ՝ նկարչի մեծությունը, նախևառաջ, հենց դրանով է պայմանավորված:

Ինձ դուր էին գալիս և դուր են գալիս նատյուրմորտները, որոնց «հերոսները» մեր հին կարպետներն են, խնոցին, կճուճը, հին վառարանը, ժյանգալով հացը...

Նրա արվեստը, կարելի է ասել, գալիս էր մանկությունից, որը լուսավոր նշակետ էր և ոգեշնչման ակունք:

Իր տեսակով մաքուր ու պարզ կերպար էր, և դա երևում է նրա կտավներում...

ԲՈՐԻՍ ՄԻՆԱՍՅԱՆ
Հայաստանի նկարիչների միության անդամ

Հրանտ Դանիելյանը գեղանկարչության նվիրյալներից էր: Նրա գեղանկարչության մեջ բնապատկերներ են, մանկության օրերի արձագանք, սեր՝ բնօրրան Կապանի հանդեպ: Էտյուդների մեջ գարնանային զարթոնք է, ամառային տաք շունչ, աշնանային թախիծ և կապանյան մեղմ ձմեռ:

Տեսարանների մեջ գերիշխում են նուրբ օքրաները, թույլ կանաչները, մանուշակագույն և կապույտ երանգները: Նկարներում լույս կա, աղոթք, գույների մեջ՝ մրմունջ:

Խենթ սիրահար էր հավատքի և սիրո լեռանը՝ Խուստուփին, որն էլ ներշնչանքի ակունք էր նրա համար: Նրա ստեղծագործությունները պահանջված են եղել ու են. Կապանի բազմաթիվ ընտանիքներում այսօր էլ կարելի է տեսնել նրա կտավները:

Ավա՜ղ, վաղաժամ հեռացավ Հրանտը՝ թողնելով կարոտ, լույս, հուշի այրվող թելեր ու լռության խոհեր...

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ
«Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրեն

Մշակութային առումով Կապանը յուրօրինակ քաղաք է, յուրօրինակ՝ իր ստեղծագործողներով, բանաստեղծներով, երաժիշտներով, դերասաններով և, հատկապես, նկարիչներով: Ու այդ շարքում իր ուրույն տեղն ունի գեղանկարիչ Հրանտ Դանիելյանը, ուրույն՝ իր բազմերանգ ներկապնակի վառ գույներով, իրեն յուրահատուկ ձեռագրով ու կոլորիտով:

Նրա աշխատանքներում առկա են ազգային մտածելակերպն ու հայրենի բնաշխարհի նկատմամբ սերը:

Սյունյաց գեղատեսիլ բնության գրկում ծնված ու կյանքի ուղին անցած նկարչի կտավներում գերիշխում են հոգու թռիչքն ու երազանքը, մաքրությունն ու անաղարտությունը, լույսն ու սերը:

Հրանտի արվեստը սնվել է շրջապատի իրականությունից քաղած կենդանի տպավորություններով: Դրա վառ օրինակներն են նրա բնանկարները, քաղաքային տեսարանները, նատյուրմորտներն ու էտյուդները: Կտավներն իրենք են խոսում իրենց մասին:

Հրանտ Դանիելյանն աչքի էր ընկնում նաև նորարարական մտքով՝ հետաքրքրվելով գիտության և մշակույթի ոլորտի ձեռքբերումներով ու նորամուծություններով:

Գեղանկարիչ լինելուց զատ՝ իր մասնագիտական փորձն է փոխանցել մատաղ սերնդին, կանգնելով Կապանի արվեստի պետական քոլեջում գեղարվեստի մասնագիտությունների ներդրման ու կայացման ակունքներում:

ՀՐԱՆՏ ԷԼՉՅԱՆ
Հայաստանի նկարիչների միության անդամ

Հրանտ Դանիելյանի մասին հուշերն ապրում են գործընկերներիս զրույցներում, ստեղծագործական որոնումներում:

Ցուցահանդեսում հաճելի էր տեսնել նրա կտավների շարքը՝ նվիրյալ զինվորների պես միմյանց հաջորդող:

Այդ կտավներից նորովի պատկերացում ենք կազմում նրա գեղագիտական ընկալումների, ստեղծագործական ժամանակաշրջանի ու ժառանգության մասին:

Մանկության արահետներն են, պատանեկության շիտակ ճանապարհը, անցյալն ու ներկան՝ ոգեղենությամբ լեցուն:

Անթաքույց է սերը հայրենի երկրամասի հանդեպ: Բազմահազար վրձնահարվածներով գաղտնազերծել է այդ սերն ու նվիրումը, ստեղծագործական իր շնորհն ու կարողությունները:

Նրա ստեղծագործությունների ամբողջականության շնորհիվ Սյունյաց երկիրը վերածվում է դրախտի, ինչպես որ կա:

Եվ, ի վերջո, նրա խորհուրդն ենք լսում կտավների միջից, մեծագույն խորհուրդը՝«Սիրեցեք Սյունիքը, սիրեցեք Կապանը»:

Նրա ստեղծագործությունների ամբողջականության շնորհիվ Սյունյաց երկիրը վերածվում է դրախտի, ինչպես որ կա:



Ակունքներ

Գուրգեն Մահարու նամակը մեր հայրենակցին

Մեր հայրենակից Արամայիս Դանիելյանը մեկն է այն հազարներից, ով սեփական մաշկի վրա զգացել է ստալինյան բռնապետության սարսափները, անցել կենաց ու մահվան պարուրակներով:

Գեղանկարչական տեխնիկումի սանն այդպես էլ մասնագիտական կրթություն չստացավ, այլև բռնեց Սիբիրի ճամփան:

Արամայիսի անցած ուղին հար և նման է իր բյուրավոր տարեկիցների և սերնդակիցների կենսագրությանը՝ հանիրավի հալածանքներ, այնուհետև՝ աքսոր Սիբիրի խորքերը: Իսկ արդարությունն այս պարագայում ավելի քան ուշ եկավ: Աքսորի դժոխային կյանքում, այնուամենայնիվ, լույսի կետեր էլ եղան, քանզի քիչ չէին հանդիպումներն իր բախտակից, ժամանակի անվանի մարդկանց, ճանաչված մտավորականների ու գրողների հետ, ովքեր ևս կարողացան դիմանալ դաժան փորձությանը, պահպանել մարդկային հոգու վեհությունը:

Արամայիսը խորին ակնածանքով է հիշում Գուրգեն Մահարուն:

Ստորև ներկայացվող նամակում Մահարին օգտագործում է «գարբուշկա» բառը: Այս առիթով բռնադատված մեր հայրենակիցը պատմել էր. **«Աքսորյալների հացն այնքան սառած էր լինում, որ հաճախ սղոցով էին կտրում, և հակառակը՝ այնքան խոնավ ու «ցեխ», որ ստամոքսը «չսոսնձվելու» համար ձգտում էին կոշտ կողերն ուտել»:**

Ահավասիկ, հակիրճ, բայց բովանդակալից այդ նամակը:

* * *

Սիրելի Արամայիս

Ձեր եղբոր միջոցով ստացա հրավիրագիրը, որով հրավիրում եք ինձ ու իմ ընտանիքին՝ ներկա լինելու Ձեր 50-ամյա հոբելյանին: Ինձ անչափ հուզեց հրավիրագիրը, ցավում եմ, որ չեմ կարող քաղաքից դուրս գալ: Չնայած որ 18 տարի ապրեցի Սիբիրի ցրտերում, այնուամենայնիվ չկարողացա վարժվել և շատ վատ եմ տանում ցրտերը:



Արամայիս Դանիելյան

Ամբողջ սրտով շնորհավորում եմ Ձեր բարի 50-ամյակն ու ցանկանում մեծ, մեծ հաջողություններ: Ցանկանում եմ հազար-հազար «գարբուշկաներ»: Հիշո՞ւմ եք:

Երևան գալիս անցեք ինձ մոտ: Խոստանում եմ փոխադարձաբար այցելել, եթե ոտս Ղափան ընկնի:

Բարևներ ընտանիքիդ: Լավ եղեք:

Ձեր՝ Գուրգեն Մահարի
8 փետրվար 68թ.»:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ», N 17,
30 ՀՈՒԼԻՍԻ 2003 Թ.



Շիկահող, որտեղից սերում են Դանիելյան գերդաստանի նախնիները

ԲԼՈՐԱՆ ԿԱՊԻՆԸ՝ ՈԳԵՇՆՉԱԳՈՒՆ ԱՂԲՅՈՐԸ

Գեղանկարներ

ցուցահանդեսից

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴՐԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի՝:

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: ® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1100, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 07.01.2025թ.: